

Վ. Ա. ՀԱՎՈՐԱՑԱՆ

Հեթում Պատմիչը միջնադարյան հայ մատենագրության ոչ անհայտ հեղինակներից է։ Մեզ հասած նրա աշխատություններից առավել արժեքավոր է «Արևելքի պատմության ծաղիկը» («La flor des estoires de la terre d' Orient»), որը լատիներեն ընդգրկից գրաբարի է. թարգմանել և հրատարակել Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Մկրտիչ Ավգերյանը¹։

Հեթում Պատմիչը, ինչպես հայտնի է, հրաժարվելով աշխարհիկ կյանքից, 1305 թ. տեղափոխվում է Կիպրոս և դառնում Պրեմոնտրյան կաթոլիկ միաբանության անդամ՝ Անտոն անունով։ 1306 թ. նա դնում է Հռոմ, ապա Ավինյոն և Հռոմի պապ Կղեմես V-ի հանձնարարությամբ Պուատիեում գրի առնում Արևելքի երկրների և ժողովուրդների, մասնավորապես մոնղոլների պատմությունը։ Այս մասին մեզ տեղեկացնում է Նիկոլա Ֆալկոնը։ Նա գրում է. «Ավարտվեց Արևելքի երկրների պատմությունների գիրքը, հավաքված Պրեմոնտրյան կարգի կրոնավոր՝ եղբայր Հեթումի կողմից, որ Կոռիկոսի (Corc) տերն է, հայոց թագավորի հարազատ։ Եղբոր որդին, Սուրբ երկիր անցնելու (նպատակով), գերագույն հայր՝ մեր տեր Կղեմես V առաքյալի հրամանով, Պուատիե քաղաքում։ Այս գիրքը ես՝ Տուլլացի Նիկոլա Ֆալկոնս, նախ գրի առա ֆրանսերենով՝ այնպես ինչպես հիշյալ եղբայր Հեթումն ինձ ասում էր։ Բանավոր կերպով, առանց գրավոր նշումների և կամ օրինակի, և հոռմերենից (ֆրանսերենից— Վ. Հ.) այն թարգմանեցի լատիներենի։ Եվ սույն գիրքը հանձնվեց (?) մեր տեր քահանայապետին՝ տիրոջ 1307 թվին, օգոստոս ամսին։ Փառք Աստծուն։ Ամեն»²։

¹ «Պատմություն թաթարաց, Վենետիկ, 1842։

² Recueil des historiens des Croisades. Documents arméniens, t. II, Paris, 1906, p. 252—253։ Ահա նաև Նիկոլա Ֆալկոնի 1307 թ. նույնի հին ֆրանսերենից լատիներեն կատարված թարգմանությունը. «Ավարտվեց Արևելքի երկրների պատմությունների գիրքը, հավաքված երանելի Օգոստինոսի կարգին պատկանող կրոնավոր-եղբայր Հեթումի կողմից, որ Կոռիկոսի (Churchi) տերն է, Հայոց թագավորի ազգականը, գերագույն քահանայապետ տեր Կղեմոս V պապի հանձնարարությամբ, Ֆրանսիայի Պիկտավա քաղաքում. և ես՝ Նիկոլա Ֆալկոնս սկզբում այն գրի առա զալբերեն (իմա հին ֆրանսերեն—Վ. Հ.) լեզվով՝ ինչպես որ նույնինքն՝ հիշյալ եղբայր Հեթումն ինձ թելադրում էր բանավոր կերպով, առանց նշումների կամ որևէ օրինակի. և զալբերենից թարգմանեցի լատիներենի տիրոջ 1307 թվին, օգոստոս ամսին։ Փառք տանը Աստծուն»։

(«Explicit liber Hystoriarum parcium Orientis, a religioso viro fratre Haytono, ordinis Beati Augustini, domino Churchi, consanguineo regis Armenie, compilatus, ex mandato summi pontificis domini Clementis pape quinti, in civitate Pictavensi, regni Franchie quem ego, Nicolaus Falconi, primo scripsi in gallico ydiomate, sicut idem frater Haytonus michi ore suo ditabat, absque nota sive aliquo exemplari, et de gallico transtuli in latinum, anno Domini Mo III^e septimo, mense augusti. Deo dicamus gratiam». նույն տեղում, էջ 362—363)։ Այս և հետագա հատվածները մեր խնդրանքով ֆրան-

(«Ci fine le Livre des estoires des parties d'Orient, compilé par le religieux home fraire Hayton, de l'ordre de Premostré, seignor de Corc, cosin germain du roi d'Ermenie, sur le passage de la Terre Sainte, par le comandement du souverain Pere nostre seignor l'apostolle Clement V, en la cité de Poltters. Lequel livre je, Nicole Falcon de Toul, escrís primlerement en françois, si come le dit freire Hayton me disoit de bouche, sanz note ne exemplaire, e de romanz le translatei en latin. E celui livre out nostre seignor le Pape en l'an [de] Nostre Seignor MCCCVII, eu mois d'aost. Deo gracias. Amen»).

Այսպիսով, Հեթում Պատմիչի թեւագրությամբ մոնղոլների վերաբերյալ աշխատությունը հին ֆրանսերենով գրի է առել Նիկոլա Ֆալկոնը, և ապա 1307 թ. այն թարգմանել լատիներենի: Այս աշխատությունը հին ֆրանսերեն բնագրով մեզ հասել է 13 ձեռագրերով³, իսկ լատիներենը՝ 8⁴: Դրանց գիտա-քննական բնագրի կազմման և հրատարակության գործով պետք է զբաղվեր էդ. Դյուլորին, բայց վերջինիս մահը (1881 թ.) խափանում է տարվելիք աշխատանքը: Այնուհետև այդ գործն սկսում են Ուլիս Բոբերը և Կոմս Ռիանը, որոնց օգնում էր Շեֆերը: 1885 թ. Բոբերին և Ռիանին փոխարինում է Լուի Մաս-Լատրին, որը Շեֆերի հետ աշխատանքներն ավարտում ու հրատարակում է 1906 թ.⁵: Այսպիսով, գիտությունը հայտնի էր Հեթում Պատմիչի մեզ հետաքրքրող աշխատության հին ֆրանսերեն գիտա-քննական բնագրի 1906 թ. Փարիզի հրատարակությունը:

Պատմական գիտությունների դոկտոր Ա. Գ. Գալստյանը քննության առնելով հայ-մոնղոլական հարաբերությունների հարցը⁶, կանգ է առնում Կիլիկիայի Հայոց թագավոր Հեթում Ա-ի և մոնղոլ տիրակալ Մանգու դանի միջև կնքված պայմանագրի վրա: Անդրադառնալով նշված պայմանագրի առանձին կետերին, նա օգտագործել է ոչ թե 1906 թ. Փարիզում հրատարակված Հեթում Պատմիչի աշխատության գիտա-քննական իրոք հին ֆրանսերեն բնագիրը, այլ

սերենից և լատիներենից հայերեն թարգմանեց Հակոբ Անասյանը, որի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

³ Նույն տեղում, էջ 112:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, նախաբան, էջ I—II: Այսպես մանրամասն ստիպված շարադրեցինք, որովհետև պատմական գիտությունների դոկտոր Ա. Գ. Գալստյանը «Հեթումի «Պատմութիւն թաթարաց» գրքի բնութագրման հարցի շուրջը» հոդվածում (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 9, էջ 63—72) այլ բան է ասում: Նրա հաղորդմամբ՝ Հեթումի նշված աշխատության «հին ֆրանսերեն բնագիրը և Նիկոլայ Սալկոնի լատիներեն թարգմանությունը հրապարակեց «Historiens des Croisades» ժողովածուի մեջ» Լուի Բակերը (էջ 64): Այդ բանի հաստատման համար նույն էջի 5-րդ ծանոթագրության մեջ նշված է «Recueil des Hist. des croisades» ժողովածուի II հատորի 214-րդ էջը: Սակայն այդ էջում հոդվածագրի հաղորդումը հաստատող նշում չկա: Հեթում Պատմիչի նշված աշխատության հին ֆրանսերեն բնագիրը տե՛ս 2-րդ ծանոթագրությունում նշված աշխատության 111—253, լատիներենը՝ 254—363 էջերում:

⁶ «Մոնղոլական շրջանի հայ դիվանագիտության պատմությունից», Լենինական, 1945, «Սմբատ Սպարապետ», Երևան, 1961, «Армянские источники о монголах», М., 1962, «Հեթումի «Պատմութիւն թաթարաց» գրքի բնութագրման հարցի շուրջը» (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 9):

1735 թ. Հաադայում Պիեր Բերժերոնի հրատարակած նոր ֆրանսերեն բնագիրը, որը համարում է հին ֆրանսերեն⁷:

Մեր նպատակն է անդրադառնալ ոչ թե Պիեր Բերժերոնի հրատարակությանը, Գալստյանի հայերեն թարգմանության սխալներին⁸, որոնք, թերևս,

7 Հեթում Պատմիչի մեզ հետաքրքրող աշխատության Պիեր Բերժերոնի հրատարակության ֆոտոպատճենն ստացանք Լենինգրադից Կարեն Յուդրաշյանի միջոցով, որի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

8 Այստեղ կցանկանայինք նշել դրանցից մեկը թե՛ որպես ոխալ թարգմանության և թե՛ որպես սխալ եղրահանգման օրինակ: Նիկոլա Ֆալկոնի (հին ֆրանսերենում և սրանից 1307 թ. կատարված լատիներեն թարգմանության մեջ գրված է Ֆալկոն (Falcon), իսկ Պիեր Բերժերոնի ավելի ուշ կատարած թարգմանության մեջ գրված է Սալոն (Salcon): չղիտես ինչու Ա. Գալստյանն առաջինը համարում է սխալ, իսկ երկրորդը՝ ճիշտ): Պիեր Բերժերոնի հրատարակության աստ-ջարանում ասվածը Ա. Գալստյանը թարգմանել է այսպես. «Ահա արևելյան երկրների պատմությունը, հավաքված Կոստանտինոպոլիսում, հայոց թագավորի ազգական մեծարդու հրապարակմանը, որ ևս, Նիկոլայ Սալկոնս Պուատիե եղած ժամանակ վեհագույն Հայրապետ Կղեմեն Կ Պապի հրամանով սկզբից այն գրեցի ֆրանսերեն այնպես, ինչպես թելադրեց հիշյալ հրապարակմանը, առանց որևէ գրանցման, առանց սկզբնաղբյուրի» (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 9, էջ 64. այդ և հետագա ընդգծումները մերն են—Վ. Հ.): Այնուհետև Ա. Գալստյանը գրում է. «Նիկոլայ Սալկոնի այս վկայության մեջ կա ակնհայտ հակասություն» (նույն տեղում): Ի՞նչ է, ըստ հեղինակի, նկատված հակասությունը, այն որ նա մի կողմից ասում է՝ «այս Պատմությունը հավաքված է... Հեթումի կողմից», մյուսն այն, որ Հեթումը թելադրեց «առանց որևէ գրանցման, առանց սկզբնաղբյուրի» (նույն տեղում): Նիկոլա Ֆալկոնի երրորդ գրում է. «Ահա արևելյան երկրների պատմությունը, ճավախված... Հեթումի կողմից» նշանակում է նա Արևելյան երկրների պատմությունը Հեթում Պատմիչի թելադրությամբ որի առկայությունը հետո, պատրաստի աշխատանք է մատնացույց անում ընթերցողին: «Հավաքված» (recueillie) ասելով պետք է հասկանալ ավարտված գործ: Հետաքրքիր է և այն, որ Նիկոլա Ֆալկոնի այս գրվածքը, որը բերեցինք հոգվածի սկզբում, հին ֆրանսերեն և լատիներեն բնագրերում (1906 թ. Փարիզի հրատարակություն) գրված է Հեթումի աշխատության վերջում (հին ֆրանսերենը տե՛ս 252—253 էջերում, լատիներենը՝ 362—363), իսկ Պիեր Բերժերոնի հրատարակությունում՝ սկզբում, նախքան Հեթում Պատմիչի աշխատության շարադրանքը:

Մյուսը զա բնագրի թարգմանության հարցն է: Պիեր Բերժերոնի հրատարակած ֆրանսերեն բնագրում ասված է. «Sans aucune observation, sans aucun original», Ա. Գալստյանն այս հատվածը թարգմանել է «առանց որևէ գրանցման, առանց սկզբնաղբյուրի»: Հատկապես սխալ է վերջին բառի թարգմանությունը. «original» ֆրանսերենում նշանակում է ոչ թե «սկզբնաղբյուր», այլ «սկզբնագիր», իսկ ֆրանսերենում սկզբնաղբյուրին ասում են «Source première»: Սա նշանակում է թե Հեթում Պատմիչը նախապես գրված ոչինչ չի ունեցել, այլ ինչպես խոստովանվում է նա իր աշխատության գլուխներից մեկում («Պատմություն թագապաշտ, 1842, դդ. ԽՁ, էջ 68»), և Ա. Գալստյանն էլ իրավացիորեն ընդունում է, որ նա իր շարադրման ժամանակ ձևորի տակ ունեցել է նյութեր: Եթե ճիշտ թարգմանվեր, ապա Նիկոլա Ֆալկոնի տեղեկության մեջ նա «ակնհայտ հակասություն» չէր գտնի: Ահա ֆրանսերեն և հայերեն թարգմանության միևնույն բնագիրը:

«Temoignage de Nicolas Salcon, touchant Halton, armenien, qu'il a mis au lieu de Preface à la tête de la version Latine. Voici l'Histoire des Païs Orientaux, recueillie, par le venerable frere Halton, Seigneur de Curchi, parent du Roi d'Arménie: que Moi Nicolas de Salcon, par ordre du Souverain Pontife Clement V. ai premièrement ecrite en François étant à Poitiers, comme le dictoit le dit frere Halton sans aucune observation, sans aucun original. Je l'ai ensuite traduit du François en Latin l'An 1307, au mois d'Août». (Նիկոլա Սալկոնի վկայությունը հայագրի Հեթումի մասին, որ նախաբանի տեղ դրեց լատիներեն խմբագրության գլխին (սա բացակայում է Ա. Գալստյանի մոտ—Վ. Հ.):

Ահա Արևելյան երկրների պատմությունը, որը հավաքված է պատվելի եղբայր Հեթումի Կոստանտինոպոլիսում, Հայաստանի թագավորի ազգականի կողմից, որ ևս Նիկոլա Սալկոնս գերադուրն բահանալապետ Կղեմեն Կ-ի հրամանով նախ գրեցի ֆրանսերենով Պուատիեում, ինչպես

առանձին հոգովածի նյութ կարող են լինել, այլ երկու հարցի. նախ՝ Պիեր Բեր-
ժերոնի ֆրանսերեն հրատարակված ընդդիմ իսկապես՝ հին ֆրանսերեն է.
երկրորդ՝ հայ-մոնղոլական պայմանագրի մասին առանձին հայագետների
հայտնած կարծիքների Ա. Գալստյանի առարկումներն արդյո՞ք արդարացի
են և հիմնավորված:

Ձևոնամուխ լինելով Հեթում Պատմիչի աշխատության Պիեր Բերժերոնի
հրատարակած նոր ֆրանսերեն ընդդիմ ուսումնասիրությանը, Ա. Գալստյանը
գրում է. «Հին ֆրանսերեն տեքստը հրապարակված է Պ. Բ. Ժիսոնի կողմից,
որից մենք օգտվել ենք»⁹: Այդպես է դրել նա նաև ավելի վաղ տպագրված իր
աշխատության ծանոթագրություններից մեկում. «Առաջին անգամ այս պայ-
մանագրի տեքստը հին ֆրանսերենից հայերեն թարգմանել եմ ես, 1939 թվին
լենինգրադում»¹⁰: Ավելին, առարկելով ակադ. Հ. Մանանդյանի և պրոֆ.
Տեր-Ավետիսյանի այն կարծիքին, որ Մ. Ավդերյանի լատիներենից գրարար
կատարած թարգմանության սխալները թերևս արդյունք են այն բանի, որ
թարգմանչի «ձեռքի տակ եղել է միայն լատիներեն տեքստը»¹¹, Ա. Գալստյա-
նը գրում է. «Մենք վերահիշյալ պայմանագրի բոլոր հոգվածները հանգամա-
նորեն համեմատեցինք հին ֆրանսերեն բնագրի հետ և համոզվեցինք, որ այդ
երկու տեքստերի մեջ (իմա լատիներեն և հին ֆրանսերեն— Վ. Հ.) աչքի ընկ-
նող տարբերություններ չկան: Չէր էլ կարող լինել, որովհետև դրանք երկուսն
էլ գրված են միևնույն հեղինակի՝ Նիկոլայ Սալկոնի կողմից»¹²: Նախ տարօրի-
նակ է, որ Ա. Գալստյանը մոռանալով Հեթում Պատմիչին որպես հեղինակի,
նրա թելադրածը գրի առնող և լատիներենի թարգմանող Նիկոլայ Սալկոնին
(իմա Ֆալկոն) համարում է հեղինակ: Երկրորդ՝ Հեթում Պատմիչի աշխատու-
թյան Պիեր Բերժերոնի հրատարակած բնագիրը հին ֆրանսերեն չէ: Հոգվա-
ծագիրը սխալվում է, երբ գրում է, թե հին ֆրանսերեն և լատիներեն բնագրե-
րում «աչքի ընկնող տարբերություններ չկան»: Իրականում թեև քիչ, բայց
տարբերություններ կան: Այժմ քննենք այդ հարցը մանրամասնորեն:

Տվյալ հարցի քննարկման ժամանակ Ա. Գալստյանն իր ուսումնասիրու-
թյուններում լրիվ չի բերել Պիեր Բերժերոնի հրատարակած ժողովածուի վեր-
նագիրը, որովհետև այդ դեպքում չէր կարող պնդել, թե դա հին ֆրանսերեն
է և կիմացվեր, որ դա լատիներենից ֆրանսերեն կատարված թարգմանություն
է: Ժողովածուի խորագիրը Ա. Գալստյանը բերել է այսպես. «V. Pierre Ber-
geron, Voyages en Asie dans les XII, XIII, ...Siccles, tome II, A la Ha-
ye MDCCXXXV»¹³. Իսկ մի անգամ էլ՝ «v. Pierre Bergeron, Voyages
en Asie, tome second, a le Haye, MDCCXXXV»¹⁴. Մինչդեռ իրականում

որ թելադրում էր եղբայր Հեթումը, առանց որևէ նշման, առանց որևէ սկզբնագրի վերջում ես
ֆրանսերենից լատիներենի թարգմանեցի այն՝ 1307 թվականի օգոստոս ամսին»):

9 ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 9, էջ 64: Սխալ է գրված թարգմանչի
անունը. ոչ թե Պ. Բ. Ժիսոն, այլ Պ. Բերժերոն:

10 «Մոնղոլական շրջանի հայ դիվանագիտության պատմությունից», էջ 52, ծան. 2:


11 ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 9, էջ 66:

12 Նույն տեղում:

13 Նույն տեղում, էջ 64, ծան. 4:

14 «Սմբատ Սպարապետ», էջ 63, ծան. 1: Հմմտ. նույն տեղում, էջ 48, ծանոթ. 1: Իսկ
«Մոնղոլական շրջանի հայ դիվանագիտության պատմությունից» գրքում նշված է. «Պիեռ.
«Հիստուառ դէ պե Օրիենտո» (էջ 58, ծան. 1): Վերնագրերը բերված են այնպես, ինչպես նշել
է Ա. Գալստյանը:

վերնագիրն այս է. „Voyages faits principalement en Asie dans les XII, XIII, XIV et XV siècles, par Benjamin de Tudele, Jean du Plan-Carpin, N. Ascellin, Guillaume de Rubruquis, Marc Paul Venitien, Halton, Jean de Mandeville et Ambroise Contarini. Accompagnés de l'Histoire des Sarasins et des Tartares, et précédés d'une Introduction concernant les voyages et les nouvelles découvertes des principaux voyageurs, par Pierre Bergeron. Tome premier. A la Haye, chez Jean Neaulme, MDCCXXXV" (տես № 1 նկարը):



նկ. № 1

Վերջինիս հայերեն թարգմանությունն այս է. «Ճանապարհորդություններ կատարված գլխավորապես Ասիայում՝ XII, XIII, XIV և XV դարերում, հետևյալ հեղինակների՝ Բենիամին Տուդելացի, Հովհան Պլան-Կարպինացի,

ն. Ասկերին, Գուլիեւմոս Ռուբրուկի, Մարկո-Պոլո Վենետացի, Հեթում, Հովհան Մաղնո-Վիլլացի և Ամրրիոսիոս Կոնտարինի:

Որին կցված է «Պատմություն սարակինոսների և թաթարների»: Ներածություն Պիեր Բերթերոնի՝ ճանապարհորդությունների և գլխավոր ճանապարհորդների նոր հայտնագործությունների մասին: Հատոր 2: Հաագայում¹⁵, հրատարակիչ Հովհան Նոլմ, 1735:

Ինչպես հայտնի է, նշված հեղինակների՝ Բենիամին Տուգելացու, Հովհան Պլանո Կարպինացու, Ասքերինի, Ռուբրուկի, Մարկո Պոլոյի, Հովհան Մաղնո-Վիլլացու և Կոնտարինի ճանապարհորդական նոթերը գրվել են լատիներեն և Պիեր Բերթերոնը դրանք թարգմանել է ֆրանսերենի: Սրանց թվում է նաև Հեթում Պատմիչի աշխատությունը, որը 1307 թ. նիկոլա Ֆալկոնը հին ֆրանսե-

HISTOIRE ORIENTALE

Ou

DES TARTARES,

De

H A I T O N,

Parent du Roi d'Armenie:

Qui comprend,

Venerablement, une succinte & aereable Description de plusieurs Roiaumes ou Pais Orientaux, selon l'Etat dans lequel ils se trouvoient environ l'an 1300.

Secondement, une Relation de beaucoup de choses remarquables, qui sont arrivees aux peuples de ces Pais & Nations.

Le tout d'ecrit par la main de NICOLAS SALCÓN, & traduit survenue l'Edition Latine de

ANDRE MULLER GREIFFENHAG.

Եկ. № 2

րեն սկզբնագրից թարգմանել էր լատիներեն և որը 1671 թ. հրատարակությունից թարգմանվել է ֆրանսերեն և տպագրվել մի քանի անգամ¹⁶: Որ Պիեր Բերթերոնի ժողովածուի խորագրից հանված մեր եզրակացությունը (ոչ ենթադրությունը) ճիշտ է, հաստատվում է թարգմանչի մի այլ վկայությամբ ևս: Պիեր Բերթերոնը Հեթում Պատմիչի աշխատության իր հրատարակության Schmutztitel-ում գրում է. «Արևելքի կամ թաթարների պատմություն գրված (հեղինակություն)՝ հայոց թագավորի ազգական Հեթումի կողմից, որը

¹⁵ La Haye-ը Հաագա քաղաքի ֆրանսերեն անվանումն է:

¹⁶ Գ. Ալթունյան, Մոնղոլական արշավանքները, Վաղարշապատ, 1913, էջ 91:

պարունակում (բովանդակում) է՝ նախ Արևելքի բազմաթիվ թագավորությունների կամ երկրների համառոտ և հաճելի մի նկարագրությունը, ըստ այն վիճակի, որում նրանք գտնվում էին շուրջ 1300 թվականին: Երկրորդ՝ մի հաղորդագրություն նշանակալի շատ բաների, որոնք պատահել են այդ երկրների ժողովուրդներին և ազդերին: Բոլորը (ամբողջը) գրի առնված նիկոլա Սալկոնի օձնով և թարգմանված Անդրե Մյուլլեր Գրայֆֆենհագի լատիներեն հրատարակության համապատասխան» (տե՛ս № 2 նկարը):

(„Histoire orientale ou des Tartares, de Halton, parent du Roi d'Armenie: Qui comprend, premierement, une succincte et agreable description de plusieurs Roiaumes ou Pais Orientaux, selon l'etat dans lequel ils se trouvoient environ l'an 1300. Secondement, une relation de beaucoup de choses remarquables, qui sont arrivees aux peuples de ces Pais et Nations. Le tout decrit par la main de Nicolas Salcon, et traduit suivant l'edition latine de Andre Muller Greiffenhag“).

Այս աներկմիտ վկայությունից միանգամայն պարզ է դառնում, որ Պիեր Բերտերոնի ժողովածուում եղած Հեթում Պատմիչի աշխատությունը Ա. Մ. Գրայֆֆենհագի լատիներեն հրատարակությունից ֆրանսերեն կատարված թարգմանություն է, և այդ թարգմանությունը որպես «Հին ֆրանսերեն» բնագիր ներկայացնելը, ինչպես պնդում է Ա. Գալստյանը, ճիշտ չէ և որպես «Հին ֆրանսերեն» ոչ մի աղբյուր չունի նույն աշխատության 1906 թ. իրոք Հին ֆրանսերեն հրատարակության հետ:

Այսպիսով, Հեթում Պատմիչի աշխատության Պիեր Բերտերոնի հրատարակած ֆրանսերեն բնագիրը Հին ֆրանսերեն չէ, այդ բնագրի լեզուն XVIII դ. ֆրանսիական լուսավորիչների և նապոլեոնյան շրջանի ֆրանսերենն է: Քանի որ Պիեր Բերտերոնի ֆրանսերեն հրատարակությունը կատարված է լատիներեն թարգմանությունից, այստեղից էլ հասկանալի է դառնում այդ երկու բնագրերի փոխադարձ համընկնումը և տարբերությունների բացակայությունը: Մինչդեռ Հին ֆրանսերեն ու լատիներեն բնագրերում (ինչպես և Պիեր Բերտերոնի լատիներենից ֆրանսերեն կատարված թարգմանության մեջ) զգալի են ոճական և ուղղագրական տարբերությունները, իսկ առանձին շեղումներ թեև քիչ, բայց կան: Բերենք միայն մեկ օրինակ. Հեթում Ա-ի ճանապարհորդության ուղղության միևնույն հատվածի մասին 1906 թ. հրատարակության հին ֆրանսերեն, լատիներեն, ինչպես նաև Պիեր Բերտերոնի ֆրանսերեն բնագրերում կարդում ենք.

1. Հին ֆրանսերենում. «Նրան (Հեթում Ա-ին—Վ. Հ.) ընկերացավ և առաջնորդեց մինչև Երկաթյա դուռը» („Lui dona compagnie, e le fist conduire jusques a la Porte de fer“)¹⁷.

2. Լատիներենում. «և նրան (Հեթում Ա-ին—Վ. Հ.) ապահովությամբ առաջնորդեց մինչև Կոմանիայի թագավորությանը և նրանից այն կողմը մինչև Երկաթյա դուռը» („et fecit ipsum secure conduci usque ad regnum Comanie et ultra eclam Portam ferri“)¹⁸.

3. Պիեր Բերտերոնի մոտ. «Նրան (Հեթում Ա-ին—Վ. Հ.) ամենայն ապահովությամբ առաջնորդելու համար դեպի (մինչև) Կոմանիայի թագավորու-

¹⁷ „Recueil des historiens des Croisades, Documents armeniens“, t. II, p. 164.

¹⁸ Նույն տեղում, էջ 297:

ընդունը և այդ երկրից (նրանից) այն կողմը. որը կոչվում է *Երկաթյա դուռ*» («pour le conduire, en toute sûreté, jusque dans le royaume de Cumanie, et par delà le país, dit la Porte de fer»¹⁹).

Ինչպես տեսնում ենք, լատիններեն օրինակը և սրանից կատարված Պիեր Բերտերոնի ֆրանսերեն թարգմանությունը համընկնում են, և այդ երկու բնադրերը քաղվածքի վերջին մասում շեղվում հին ֆրանսերենից, ունենալով «դեպի (մինչև) Կումանիայի թագավորությունը և այդ երկրից (նրանից) այն կողմը (որը կոչվում է)» լրացուցիչ հատվածը:

Ա. Գալստյանը նման շեղումների մասին լռում է, սակայն հետաքրքիր է նրա աշխարհագրական ըմբռնումը: Կումանիայի թագավորության տեղագրության մասին Ա. Գալստյանն իր աշխատություններում ոչինչ չի ասում. միայն ուսուսերեն աշխատության ծանոթագրություններից մեկում գրում է. «УАР-СТВО КИПЧАКОВ»²⁰: Թե վերջինս որտեղ էր գտնվում, դարձյալ լռում է: Մինչդեռ հայտնի է, որ կումանացիները (Եվրոպայում հայտնի ղազաղներ կամ պոլովցիներ անունով) ապրել են Միջին Ասիայում՝ Ղաղախստանի կենտրոնական և հյուսիս-արևմտյան մասերում, ապա X—XI դդ. և ավելի ուշ տարածվել Հարավային Ռուսաստանի տափաստաններում, Դնեպրի ափերին, Հունգարիայում, Կովկասում և Փոքր Ասիայում՝ Անատոլիայում: Ինչպե՞ս պետք է հասկանալ Պիեր Բերտերոնի ֆրանսերեն թարգմանության ու լատիններեն բնագրերի «դեպի (մինչև) Կումանիայի թագավորությունը և այդ երկրից (նրանից) այն կողմը. որը կոչվում է Երկաթյա դուռ» նշումը: Ըստ Ա. Գալստյանի՝ ստացվում է, որ Հեթում Ա թագավորի պատգամավորությունը նախ գնացել է Միջին Ասիա թե՛ Հյուսիսային Կովկաս կամ Հարավային Ռուսաստան, ապա սրանցից որևէ մեկի միջով անցել ու հասել Երկաթյա դուռ երկիրը: Մեր կարծիքով՝ Կումանիայի (Կումանիայի) թագավորություն ասելով պետք է հասկանալ Իկոնիայի (Ռումի) սուլթանությունը, որովհետև, ինչպես նշեցինք վերևում, կումանացիները տարածվել էին նաև Փոքր Ասիայում. երկրորդ՝ Հեթում Ա-ի պատգամավորությունը, ըստ Կիրակոս Գանձակեցու և Սմբատ Սպարապետի հաղորդման, անցել է այդ երկրի միջով նոր հասել Շերդ ղուռն Դարբանդայ», այսինքն՝ Երկաթյա դուռը²¹: Վերջապես Իկոնիայի (Ռումի) սուլթանության քաղաքներից մեկը կոչվել է Կումանա²²:

Այժմ անդրադառնանք երկրորդ հարցին: Հայ-մոնղոլական պայմանագրին նվիրված իր աշխատություններում Ա. Գալստյանը սխալ է համարում առանձին հայագետների հայտնած կարծիքը Հեթում Պատմիչի և պայմանագրի մասին և դարձյալ անտեղի քննադատում նրանց:

¹⁹ Տե՛ս Պիեր Բերտերոնի նշված աշխատության 38-րդ էջը:

²⁰ «Армянские источники о монголах», стр. 126, прим. 166.

²¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 364, 366: Սմբատ Սպարապետն այսպես է հաղորդում. «Գնալի (Հեթում Ա-ն—Վ. Հ.) ընդ մեջ Իսմայիլացուց ցեղիցն, որ ընակեալ էին յերկիրն Գամրաց» («Տարեգիրք», Վենետիկ, 1956, էջ 229—230):

²² Վ. Ալիշան, Աշխարհագրություն, Վենետիկ, 1853, էջ 517, § 1695: Ավելի վաղ այդպիսի է կոչվել նույն սուլթանության մեջ մտնող Եվրոպիայից մոտ 10 կմ հյուսիս-արևելք գտնվող քաղաքներից մեկը, ուր գտնվում է Հովհան Ոսկեբերանի դերեգմանը (նույն տեղում, էջ 517, 554, §§ 1691, 1840, տե՛ս նաև Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Հայերեն ձեռագրերի ժե՛զարի հիշատակարաններ (1601—1620 թթ., հ. Ա, Երևան, 1974, էջ 247, 374, 376):

Գ. Ալթունյանն իր «Մոնղոլական արշավանքները» գրքում գրում է. «Այս գործի (Հեթում Պատմիչի քննության ենթակա աշխատության— Վ. Հ.) գլխավոր արժանիքը նրա աշխարհագրական, պատմական և կուլտուր-պատմական նկարագրություններն են. իսկ նրա տեղեկությունները, որ նա պատմում է Հայոց թագավորների և իշխանների առանձնապես Հեթում թագավորի մասին, մեծ զգուշությամբ պետք է գործածել, որովհետև մոռանալու չէ, որ Հեթումը ամենից առաջ պալատական պատմիչ է»²³: Սրան էլ է առարկում Ա. Գալստյանը. նա գրում է. «Հեթում Պատմիչին համարելով «պալատական պատմագիր», շատ հայագետներ բոլորովին սխալ կարծիքներ են հայտնում»²⁴ կամ՝ «առանձին հայագետներ... նրան «պալատական մի պատմագիր» են համարել»²⁵: Վերջապես մի ալ տեղ էլ գրում է. «Ումանք... հեղինակին (Հեթում Պատմիչին— Վ. Հ.) անվանելով պալատական կեղծ պատմագիր»²⁶:

Ա. Գալստյանի առարկությունը Հեթում Պատմիչի սոցիալական ծագման, միջավայրի և գաղափարախոսության վերաբերյալ բոլորովին անհիմն է: Չէ՞ որ Հեթում Պատմիչը Հեթում Ա թագավորի եղբոր՝ Օշինի, որդին էր, Կոռիկոսի իշխանը և Կիլիկիայի հայկական թագավորության գործի հրամանատարը: Նա ծագումով Հեթումյան թագավորական տոհմի շառավիղ էր և գտնվում էր արքունիքում, այսինքն՝ իշխող դասակարգից էր: Պատահական չէ, որ 1294 թ. ընդօրինակված բժշկարանի հիշատակարանում Հեթում Պատմիչը բնութագրված է «զթագաւորազն այր», «թագաւորազն և բարեհամբաւ զայրն... տէր Կօռիկօսոյ»²⁷: Բնական է, իր հորեղբոր՝ Հեթում Ա-ի մասին գրելիս նա պետք է քաղաքական նկատառումներով նրա արածը չափազանցել: Մի՞թե «պալատական պատմիչ» բնութագրումը սխալ է, որին առարկում է Ա. Գալստյանը: Եթե, իսկապես, նա դեմ է Գ. Ալթունյանի բնութագրմանը, ապա ինչու՞ է նա լուծյամբ անցնում և չի պարզում Հեթում Պատմիչի ոչ պալատական պատմագիր լինելու հանգամանքը:

Ա. Գալստյանն առարկում է նաև առանձին հայագետների այն կարծիքին, որոնք հայ-մոնղոլական պայմանագրի մասին Հեթում Պատմիչի հաղորդումներում նրան «մեղադրել են չափազանցությունների մեջ և նրա հաղորդած նյութերը հավաստի չեն գտել»²⁸: Այդ առարկությունը հիմնականում ուղղված է ակադ. Աշոտ Հովհաննիսյանի դեմ, որ նա իբր հայ-մոնղոլական պայմանագիրը համարել է «անպետք որպես պատմություն, պիտանի... որպես լեգենդ»²⁹:

23 Գ. Ալթունյան, նշվ. աշխ., էջ 91:

24 «Մոնղոլական շրջանի հայ դիվանագիտության պատմությունից», էջ 50, ծան. 4: Որպես օրինակ նշում է Գ. Ալթունյանին և մատնացույց անում վերևում հիշված նրա աշխատության 40—50 էջերը:

25 ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 9, էջ 65:

26 «Ամբատ Սպարապետ», էջ 67: Այստեղ 2-րդ ծան. մեջ նշված է դարձյալ Գ. Ալթունյանի աշխատության 40-րդ էջը: Սակայն ոչ այս և ոչ էլ վերևի՝ 24-րդ ծան. մեջ նշված 40—50 էջերում նման կարծիք չկա: Այստեղ խոսվում է Հուլավույի կողմից 1258 թ. Բաղդադի նվաճման և այլ դեպքերի մասին: Գ. Ալթունյանի կարծիքը գտնվում է իր գրքի 91-րդ էջում: Բացի այդ, ինչպես վերևում ենք մեջբերել Գ. Ալթունյանի կարծիքը, այնտեղ «կեղծ» բառը չկա. դա Ա. Գալստյանի հորինածն է:

27 Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 337:

28 ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 9, էջ 65:

29 Նույն տեղում, էջ 67, «Ամբատ Սպարապետ», էջ 67:

նախ՝ Ա. Գալստյանն իր ավելի ուշ հրապարակած աշխատության մեջ ինքն էլ է ընդունում չափազանցությունների փաստը³⁰ և լռում իր նախորդ հոդվածում եղած առարկությունների մասին: Երկրորդ՝ ակադ. Աշոտ Հովհաննիսյանի կարծիքը նա կամ չի հասկացել կամ էլ նենգափոխել է նրա շարադրանքը:

Ակադ. Աշոտ Հովհաննիսյանը խոսելով հայ-մոնղոլական պայմանագրի մասին դրում է, որ Հեթում Պատմիչը տեղեկացնում է «թե իբր մոնղոլ խանը Կիլիկիայի թաղավորին խոստացել էր բառնալ (իմա վերցնել, բարձրացնել— Վ. Հ.) Քրիստոսի խաչը, ընծեռել Երուսաղեմի նվաճման ծրագիրը»³¹, որ Ղազան ղանն իբր թե «հրամայել էր սպանել այն մարդուն, որը նրան խորհուրդ էր տվել ընդունել Մահմեդի կրոնը»³² և այլն: Այնուհետև հեղինակը եղրակացնում է. «Դժվար է հավատալ, թե «Պատմիչը» այսպես կարող էր դրել մի իշխողի (իմա՝ Ղազան ղանի— Վ. Հ.) մասին, որը էլխանների պատմության մեջ հիշվում է որպես մահմեդականության մոլեռանդ ախոյան»³³, կամ «Հեթում «Պատմիչի» այս ու նման ճավառիացումներն պատմական արժեքը խիստ կասկածելի են և դրանց հետապնդած քաղաքական տենդենցը խիստ ակնբախ»³⁴: Այնուհետև նա շարունակում է. «Բայց այս ամենը, անսկսած որպես պատմություն, պիտանի է որպես լեգենդ»³⁵:

Ուրեմն ակադ. Աշոտ Հովհաննիսյանի ասածը վերաբերում է ոչ թե հայ-մոնղոլական պայմանագրին ամբողջապես, ինչպես կարծում և հավաստիացնում է Ա. Գալստյանը, այլ Հեթում Պատմիչի հաղորդումների չափազանցված մանրամասներին:

Վերջին հաշվով հայ-մոնղոլական պայմանագրի իսկական, սկզբնագիր բնագիրը մեզ չի հասել, այն Հեթում Պատմիչն իր աշխատության մեջ ներկայացրել է հիշողությամբ, ավելի քան հիսուն տարի հետո և բնական է, որ նման վավերագիրը իսկական և պաշտոնական բնույթ չի կարող ունենալ:

Ամփոփենք. պատմական գիտությունների դոկտոր Ա. Գալստյանը վերելում նշված իր աշխատություններում առանց փաստարկման փորձում է համոզել ընթերցողին, որ Հեթում Պատմիչի քննարկման ենթակա աշխատության լատիներեն բնագրից Պիեր Բերտեռոնի թարգմանած և հրատարակած Ֆրանսերեն բնագիրը հին Ֆրանսերեն է, որ առանձին, երբեմն էլ շատ հայագետներ, ինչպես դրում է հեղինակը, սխալ կարծիքներ են հայտնել Հեթում Պատմիչի և նրա հաղորդումների մասին: Կարծում ենք, սույն հոդվածում բերված փաստարկումները լիովին բավարար հիմք են տալիս աներկբա պնդելու, որ Ա. Գալստյանի հայտնադրած «պատմագիտական նորությունները», որոնք նա, ի միջի այլոց, տարիներ ի վեր կրկնում է իր մի շարք աշխատություններում, ընդհանուր ոչինչ չունեն պատմական ճշմարտության հետ:

30 «Սմրատ Սպարապետ», էջ 67:

31 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 174:

32 Նույն տեղում, էջ 175:

33 Նույն տեղում:

34 Նույն տեղում:

35 Նույն տեղում:

К ПЕРЕВОДУ КНИГИ «ИСТОРИЯ ТАТАР»

В. А. АКОПЯН

Р е з ю м е

Доктор исторических наук А. Г. Галстян в своей статье «К характеристике книги Гетума «История татар» («Известия АН Арм. ССР», общ. науки, 1958, № 9) и в других своих работах необоснованно утверждает, что Пьер Бержерон в 1735 г. издал древнефранцузский текст Гетума.

На самом же деле Бержерон лишь перевел работу Гетума с латинского, изданного А. М. Графенхайгеном, на новофранцузский язык. Необоснованны также возражения А. Галстяна против мнений Г. Алтуняна и А. Г. Иоаннисяна относительно социальной принадлежности историка Гетума и характеристики армяно-монгольского договора.